



Պուտուական տաճար ի Քաջինքին.



## ՊՈԽՏՏԱԿԱՆ ՏԱՃԱՐ ԻՓՕՉԻՆՉԻՆ

Արեւելեան Ասիոյ մեծ երկիրներէն մէկն ալ Քօչինընը կամ Աննաւի կայսերութիւնն է որ Հնդկա—Չինաց թերակղզոյն դրացի է, եւ երկայն ժամանակ անձանօթ մնացած եւրոպացւոց: Երկրին մակերեւոյթը կ'համարուի 550,000 քիլոմէթր. իսկ բնակիչքը՝ 15—20 միլիոն: Քօչինընը՝ ըստ վերջին տեղեկութեանց՝ լեռնոտ անտառախիտ ու բարեբեր երկիր մի է, շատ աղնիւ ծառեր ունի, ինչպէս արանոս, հալուենի, եւ այլն: Բերքն է բրինձ, եգիպտացորեն, շաքարեղէգ, չայ, բամբակ, թիթենի, եւ մանաւանդ մետաքս, որ Քօչինընի գլխաւոր հարստութեանց միւնն է, եւ կերպասն ու բամբակեղէնը՝ շատ յարգի:

Բնակիչքը գլխաւորապէս երեք ցեղ կը բաժնուին. Քօչինընացի կամ Աննաւցի որ Չինացւոց շատ մօտ են. Քաւկոնցի որ Սիամացւոց կնմանին, եւ Մոլեցի՝ որ Քաֆրաստանցոց ցեղին մօտ են եւ նոցա պէս վայրենի կեանք կանցընեն լեռներու վրայ: Քօչինընացոց սովորութիւնքն ու օրէնքները Չինաց պէս են:

Կրօնը՝ կռապաշտութիւն է՝ Պուտտայի աղանդէն, ու վերին դասուց մէջ ծաւալած է Կոնփուկիոսի վարդապետութիւնը. իրենց քրմերը որ քալաիոյի կըսուին՝ շատ պատիւ չունին: — Մէջերնին քրիստոնէութիւնըն ալ մտած է ժի գարէն իվեր՝ գաղղիացի քարոզչաց ձեռքով, եւ այժմ քանի մը հարիւր հազար քրիստոնեայ կ'համրուի:

Կառավարութիւնը բացարձակ միապետութիւն է, եւ ժողովուրդը երկու կըստնուի, յաղնուականս (մանսարին) եւ իռամիկ կամ խաժամուժ՝ որ գերիի պէս են:

Չինուորութիւնը բաւական առաջ գնացած է մէջերնին, որովհետեւ 1787-ին՝ նոցա թագաւորը կամ կայսրը Գաղղիացւոց պաշտպանութիւնը խնդրած լինելով՝ շատ մը գաղղիացի սպայք Քօչինըն գնացին, եւրոպական կարգեր մտուցին ու տէրութեան գլխաւոր պաշտօնները ձեռք առին: Բայց եւ այնպէս՝ Միւնկ—Մանկ (1820—42) Թիւօ—Թրի (1842—47) կայսերը շատ թշնամութիւն ըրին եւրոպացւոց. այժմու կայսրն եւս որ Թիւօ—Տիւֆ կկոչուի իւր նախորդացը ատելութիւնը ժառանգելով՝ շատ նեղութիւններ տուաւ քրիստոնէից ու գաղղիացի քարոզչաց, զրկելով զնոսա եւ հալածելով: Այս պատճառաւ նա փոխուն կայսրը նաւատորմիղ եւ բանակ մը զրկեց ի Քօչինըն, որ այլ եւ այլ պատերազմներով եւ յաղթութեամբք քրիստոնէից վերէժն առին, ազատութիւններ ձեռք ձգեցին ու տոկոսեօք հանգերձ քրիստոնէից ինչքը պահանջեցին. բայց դեռ պատերազմը լմնցած չէ. Գաղղիոյ բանակը հօն կեցած է եւ միշտ կ'հսկէ, եւ մանր մունր խառնուրդներու եւ յաղթութեանց լրերը կուտան լրբարգիւրք: Այս պատճառաւ մեք ալ մեր ընթերցողաց արժան համարեցինք համառօտ տեղեկութիւն մը տալ այս անձանօթ երկրին վրայ, ընծայելով միանգամայն Քօչինընի կռատան մը պատկերը:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

ՄՈԾԱԿԻ ԽԱՅԹԵԼՈՒՆ ՏԱԻՉ ԿՏՐԵԼ

Մոծակէ խոյթուած տեղը շուտ մը շփէ անուշադրի ոգիքով, որ է նըշարր րուհու, իսկոյն ցաւը կանցնի:

ԳԻՏԵԼԱՄ ԾԵՃՈՒԿ

Երկու շիշ կամը եփ հանելէն վերջը՝ վրան կէս գաւաթ ցերմակ գինի լից, ու երբոր կամը հանգարտի՝ քամէ:

